


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
Ե. ԹՈՐՕՏՅԱՆ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պետք է ուղղել առ
Տնօրինութիւն ԱՐՇԱԼՈՅՑ ԼԻՐԱՐԻ
ԳԱՇԻՐԷ (Եգիպտոս)

Adresse:
E. TOROSSIAN
Direct.-prop. du journal Arménien
ARCHALOUYCE
LE CAIRE (EGYPTE)



Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆ

ԵՂԻՊՏՈՒ ՆԱՄԱՐ
Տարեկան ողջ դասերի... 60
Վեցամսեայ » 35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ
Տարեկան Ֆրանկ 20
Վեցամսեայ » 12

ԲԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆ
Եւ թղթատարի ծախքը
Խոնարարութեան վրայ է :


Խոնարարութեան ուղղութեամբ գրութիւնք
եւ չեն տրուիր :

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՔ
Կանխիկ վճարելի են :

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆ

« Արշալոյս » ի առաջիկայ 220րդ թիւը, փոխանակ Շարաթ օրուան, պիտի հրատարակուի երկուշաբթի օրը, և միասին պիտի ունենայ շատ կարեւոր և ընդարձակ յաւելումներ :
Մեր ընթերցողաց մասնաւոր ուշադրութիւնը կը հրահարենք յիշեալ յաւելումներն վրայ, որ ամենակարեւոր նիւթեր կը պարունակէ իր մէջ :

ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆԸ



Անկեղծ գիտակցութիւնը կեանքի ասպանող ուղեցոյցն է :

Երկու շաբաթ առաջ « Արշալոյս » ի մէջ « Մեղիկ » ծածկանունով երեցող յօդուածը Արշալոյս կարգաւ չ'ուղղորդելու իսկ խըլըրտեց, յուղեց, . . . Գրական հաշակերտ մը չ'էր այն, և շարագործն ալ բարեբաղդաբար գրագէտ կոչուելու խօս բարձրանքով չ'մաշիր, թէ և վերջերս շատերուն բնական այստ մը դարձած է՝ հօգեկան սլացիկ ու անտարբեր գագուռներու անծայր ոլորտին անձանօթ բաւոյններուն անէ՛լ շաղկապ մէջ թափառել մտայնող . . . Գրեթէ միայն փառասիրական է այս ձկուռմը՝ որուն անյազ թռիչներն անստակ կը մնան յաւէտ հասնելու անյանգ նպատակին . . .

Գրական հրահարներ մը չ'էր այն բայց սե՛ւ սրտերն որկող պիտակակայ կայծ մ'էր, գիտակցութեան ու ողջմտութեան հարազատ սալին վրայ դարբնուած :

« Մեղիկ » որ թարգմանի այժմ Կ. Գ. Ուշուհեան, կրցաւ, ճիշտ ժամանակին ներգործել, գէթ երևութապէս, այն վրէժխնդիր նախանձի գաղափարաբարձներուն վերայ, որոցմով վարակուած մտքերն հիւանդոտ տգեղ տեսարան մը պարզելու պատրաստուած էին անխնայմօրէն . . . Գահիրէի արգաւանդ հրապարակը այդ մանրէներով ողորուած է հիմա : Եթէ անգլակերպ ազդու հակաեկեղեցական ժամը ժամին չ'պատրաստուին, հիւանդութիւնը կրնայ համաճարակի կերպարանն առնուլ և վտանգել բովանդակ հայ հասարակութիւնը :

« Մեղիկ » ի գրածին մէջ, ամեն մտածումէ վեր նպատակ մը կար, նուիրական ու բարոյական ազնիւ նպատակ մը, շատ լայն գաղափար մը, քաջընտելու բոլորովին անընդունակ, զոր, զժբաղդաբար, մեղմէն ու մանք, կամաւ, չ'ըմբռնելու կուրտութիւնն ունեցան, այլոյ նկատմամբ նախանձ, յաջողկոտ ու չար ըլլալին միանգամ ընդ միշտ ապացուցած ըլլալու համար :

Ըսուած է թէ՛ « Ամէն » ո՛վ որ արդարութիւն չ'գործեր, անկիւ Աստուծո՛ւմէ չէ, և ան ալ՝ որ իր եղբայրը չ'սիրեր :

Ետեւ, առանց հանցած ըլլալու յօդուածագիրը, անտարբեր իրապաւ. տնոր զգացումներուն ու գաղափարներուն, անգիտակ անոր համոզումներուն ու ըմբռնումներուն, նենգամիտ կամ չահամը անուանելու յանդուգն փութկոտութիւնն ունեցած էին : Այս կարգի անազնիւ, անտաշ, անտրամաբան ու ըմբոստ գլուխները ուղղութեան բե-

րելու համար շատ տարիներու և խիստ օրէնքներու կը կարօտինք. հիմակու հիմայ անոնցմով զբաղելու ժամանակ չ'ունինք, բայց շատ արգահատունք ունինք այդպիսիներուն նկատմամբ :

Հա՛պա ի՛նչ պիտի ըսէք այն գունափոփոխ գէմբերուն, որք մութ խաւերու մէջ իրենց փոսացած կլափոսներէն ժայթքեցողութեան ըրձուկը լիզել ստելէն աւելի հեշտ չ'սեպեցին :

Ի՛նչ ստակալի անկում է այս, ընթերցող, և ի՛նչ տարօրինակ նկարագիր : Մեր շատ մը պակասութիւններով հանդերձ՝ գէթ կրնայինք մեր գործոց մէջ անկեղծ ու քաջ ըլլալ : Կեղծաւորութիւնն ու ստութիւնը անգարմանելի թերութիւններ են, և միանգամայն խիստ աննպաստ մեր բարեշնչման : Վտարանդի, զժբաղդ հայը ի՛նչպէս պիտի կրնայ մարտել իր ծոցին մէջ պատրաստուած այդ արտոտ խմորը : Այդ ցեցակեր զանգուածին պատճառաւ՝ հային գաղտփառային սրբազան միութիւնը ամենուրեք խոչ ու խուժի հանգիւսած է :

Ո՛հ, զժուար է մաքաւել դիմակաւորներու ստուար խուճիկն հետ, և նահանջըն ալ վտանգաւոր ու անդարմանելի : Եթէ արդարութեան ու մարդասիրութեան անկեղծ սիրովն սոցորուած սկզբունքի ու դատողութեան տէր բարձրաստիճան մարդիկ մեր եզրկատու ազգային խառնակ գործերուն վերջնական լուծում մը տալու նպատակով արիւարար չ'մաքառին, շատ չ'անցած՝ ողբալ միայն պիտի կրնան անոնց մոխրակոյտին վրայ :

Նախ՝ մեր ժողովուրդը քաջ գիտնալու է որ գիտակցութիւն կոչուած աստուածային բնազդը գոյութիւն չ'ունի բնաւ դիմակաւորներու շրջանցած անգոյն հոգիներուն մէջ : Եւ սակայն, մարդուն բնութեան գերազանցութիւնը չարին ու բարոյն անսխալ գատուորէն՝ գիտակցութեան կախում ունի եւեթ : Մարդ այդ երկնային անկախ ու իմաստուն ձայնին, ապահով առաջնորդին հետեւելով միայն կրնայ բարոյացնել իր գործերը և նմանիլ Աստուծոյ :

Առանց այդ անհո՛ւն թրթուումին կըրնանս գտնել մէ՛ղք, ո՛վ ընթերցող, աղնիւ յատկութիւն մը որ քեզ գերադաս ընէ անբան կենդանիներէն : Մտաւորական առանձնաշնորհումը անսկզբունք ողջմտութեան մը յենով՝ սխալանքէ սխալանք պիտի մղէ քեզ, տխուր կացութեան մը պիտի մատնէ հոգիդ, կեանքդ անասնական փցուց հրաշքներով պիտի սպառէ, և ոմանց փիլիսոփայական անսահման կարծիքներուն պղտոր տարուբերումին մէջ հուսկ ուրեմն պիտի խըղձէ անհատականութիւնդ ու էութիւնդ, թէ բնութեան լեզուով մեզ խօսող այն ճշմարտախօս ու անուշ-լեզու ուղեցոյցին, խըղձմտանքին ունկնդրելէ դադրիս :

Գիտակցութիւնը թէ և վեհերոտ՝ բայց անյողող է : Չարիք պայքար յառաջ բերող նախապաշարունակներն ու կանխադատութիւնները, այլ՝ անագորոյն թշնամիներն զէնընկէց ընելու համար, բանաւոր ու արդար եղանակներ կը սարքէ, միշտ գովելի զգուշութեամբ մը :

Արդ, ի՛նչ կ'ուզէք որ պատասխանէ « Մեղիկ » այն ողորդութիւններուն, որ միւլեւանդօրէն կը համարձակին նենգել գիտակ-

ցութիւնը : Իրենց անբնական կենցաղավարութիւնն արգէն այն աստիճան անզգայացուցած է գիտակցութեան միակ ընդունարանն եղող իրենց շղային դրութիւնը, որ այլևս յաւէտ անխելի պիտի մնան խղճի արդար բողբոսներն իրենց համար :

Ի՛նչ կ'սպասէ վերապատ հայր այս դասակարգէն, և ի՛նչ կրնայ յուսալ ծխապատ հայրենիքն այս տխրո՛ղ գէմբերէն, որք աւելութեան ու նախանձու կիրքերովն բորբոքած՝ օտարութեան մէջ իսկ ծծիկ կը սիրեն իրենց եղբայրներու ցամբած արեւը : « Մեղիկ » թէ և ձեր փոխ ոտուած զէնքերովն դատապարտեց մէկը արդարօրէն, բայց և այնպէս, և ձեզմէն լաւ գիտէ զնահատել, սիրել այդ կեանքը Գաւազան (խորատ) խնայողը իր որդիին կ'ատէ : Բայց զանկալ սիրողը կոտորակէ կը լըրատէ : Մարդ պարտական է ամեն բանէ առաջ խնայելու մարդուն կեանքը, և մանաւանդ այդ կեանքն յաւերժացնելու միջոցներն ըստեղծելու համար ծնած է :

Պատ. Գալ. Ժողովը հոգաբարձութեան իրաւասութիւնն յարգելով՝ հանդերձ, կըրցաւ նաև առժամայէս վերջ տալ Սրբորդին յարուցած անտեղի աղմուկներուն :

Անտարակոյս անոնք ի նկատի ունենալով՝ դպրոցն ու մեր դեռաբողբոս սերունդը, լաւագոյն կարգադրութիւն մը ընել պիտի բարեհաճին անկողնակալօրէն, երբ երեսփոխանական Պատ. Ժողովը գումարի է : Եւ մերք, ընթերցող բարեկամներս, մեր գործօն մարմիններուն թողովը այդ խնդրոյ արդար լուծումը, անկեղծ ըլլալ սովորից յաւէտ մեր կեանքի այս համառոտ ճամբուն մէջ, և մեր անձնասիրութիւնը այլոց փճացման, անհասցման սև ծովսովըն խնկարկելէ զգուշանանք :

Կ. Գ. ՈՒՋՈՒՆԵԱՆ

ՆՈՒԱԳԻ ԱՇԽԱՐՀԷՆ

Միթէ չունի թռչնոց դայալալիկն ալ իւր մէջ ներգաղանկութիւն մը, ո՛հ, չնք կարող ուրանալ այդ բնածին ձիւրքն, որ բնութիւնը օժտած է ատով, նորա փոքր ուղեղային զանգուածը, որ կը ներփակէ անուշ ու հմայիչ երգեցողութիւններ՝ որ ոչ միայն մարդիկ կը հրապուրեն, այլ հրեշտակներն իսկ, պար կը բանեն անոնց դայալալներուն հանդէպ :

Արդեք մասնաւոր լաբաններու մէջ կուսանին այսքան ներգաղանկ ճառողները — ո՛չ երբէք, այդ հարցումը ծիծաղելի է մեզ :

Բայց քիչ մ'ալ յառաջ ընթանանք եւ զնենք, ան պիտի գտնենք մասնաւոր փափաք եւ հիացում մը, ունկնդրութիւն անոնց ալ մէջ : Ինչպէս դուրսվարժ ձագուկներ իրենց ծնողաց վարժ դայալալիներէն զգածուած լուս ու մուշտ տերեւոց տակէն ազանջ կը զնեն անոնց քաղցր երգերուն ու քիչ մը հեռանալով անոնցմէ, կը սկսին փորձել, ի վերջոյ կը յաջողին նմանցնել անոնց :

Ոչ միայն զիրենք զօրացնելու համար մասնաւոր ջանք կը տածեն այլ իրենց նմանները հրապուրելու լուրջ եռանդով մը կ'աշխատեն : Ինչ իրենցմէ գերիզիւր բարբառներն ալ, հրապուրել կը ջանան կարծես եւ այս՝ ինչպէս սովորական զարձած է արգէն մարդոց՝ նոցա մասնաւոր ունկնդրելը :

Միթէ այս փոքր կենդանին օրինակ մ'ըլլալ կ'աշխատի, մարդկութեան եւ կամ այդպէս տնօրինուած է, թէ մարդկութիւնը օրինակէ այս փոքր կենդանոյն ուսումը, և բնաւ այդ

մարդկութեան յառաջդիմութեան պատիւ չի համարուիր կարծես, թէ հարկ չի կայ օրինակելու և անոնց մասնաւոր հիացում չ'որոշած հեղին մարդիկ նուազին այդ կարգ մը մրուանչներուն զեղարուեստ անուանեն եւ մասնաւորապէս երթալու թիւն բանի : Ի՛նչ, միթէ այս գիշանիլ չէ՛ մեզ համար :

— Ո՛չ, բնաւ երբէք, անա այս ալ նուազի ու երթալու թիւն աշխարհն է, որուն թռչուններն ալ կը պատկանին, պետք է օգտուիլ բնութեանն :

Ո՛հ, ցաւ ի սիրտ սա բառերը կը զոզողնէ լեզուս թէ՛ նեղու են դու բազմաթիւ հայ երիտասարդներ այն հրեշտակային աշխարհէն, զիւղի վերացական աշխարհէն, այս՝ ունեցած ենք մի քանիներ՝ իսկ շատերն նուազի աշխարհին մուլ երկիրները կը թափառին դու : այսքան յարգողներ, գնահատողներ, բայց ինչո՞ւ ասոնք քիչեր միայն ըլլան :

Ունինք բոլորից կարող ու մարդկութեան ճշմարիտ ծառայող, ունինք գրագէտներ բարձր տաղանդներով ներշնչուալ, ունինք նաեւ նկարիչներ օտարներու հիացման եւ պատուոյ լէզուներու արժանացող, ինչո՞ւ չ'ունենանք շատ կամ մէկ քանի՛ն աւելի երթալու եւ նուազի տիպարներ :

Ունեցած ենք Չուխանեան մը, անցեալ դարու մէջ, իսկ այս դարուս կը պարծինք միայն Սվաճեանով, իւր կարող դաշնակահարն :

Ինչո՞ւ մէկ կամ երկու, ի՛նչ ցաւալի բան, միթէ ամեն դարու մէջ մէկմէկ միայն պիտի արտադրենք :

Գիտենք միայն կազմուելու անմիջապէս անջատուելու եւ ոչ թէ շարունակելու : Եւ արուստկութեան մէջն է միայն յառաջդիմութիւնը, կ'ըսէ շիւքո, յարատեւ քաղցրութիւն մէջ կը ներփակուին միայն մեծ անձեր արտադրելու գաղտնիքը :

Արդեք ի՛նչ գանձեր պահուած են իրենց անտաշ վիճակին տակ, մեր զարոցներուն ուսանողաց մէջ :

Պէտք է ամեն վայրկեան զանոնք զբզոկ ու զնենել, անա պիտի գտնենք նշանաւոր ապագայ խոստացող գլուխներ, ինչո՞ւ ասոնք թողունք որ խամբին անչան դառնան :

Մեր մէջ ունեցած ենք անհասնելի, ինչո՞ւ, ընդանրացած եւ կամ շատեր չենք ունեցած, ի՛նչ է պատճառը . . . ուրիշ բան չէ՛ այլ միայն մեր վարժարանաց թերի սահմաններն է, եւ կամ աւելի այդ ճիւղին նուազ կամ բնաւ կարեւորութիւն չի տրուելն է, որ այսքան սկզբնաճած է նուազի ու երթալու թիւն ճիւղերը :

Անհատներ ունենալ, ի՛նչ զարմանալի բան, ըսել է շատեր ալ կրնանք ունենալ, քանի որ այդ անհատներն օտար չ'են, ինչո՞ւ այդքան յառաջացեր են : այս շատ զարմանալի չէ. այդ ծընուողը կրնայ գտնուիլ այնպիսի լուսամիտ ծընողաց հոգածութեան ներքեւ, որ իրենց զաւկին բնական ձիւրքն տեսնելով մասնաւոր իւր նամք կը տածեն, այսինքն այդ յատկութեան զէմ կոյր չեն մնար : արդ ուրեմն ի՛նչ պարագաներ կը պակսին տղուն յառաջդիմութիւնը ընդհատելու :

Գտնուած են նաեւ այնպիսի տղայներ, որ հակառակ իրենց ծնողաց թուրութեան, յաջողած են նշանաւոր հետեւորներ դառնալ, բայց ասոնք բացառութիւններ կը կազմեն :

Միթէ սխալ գաղափարներ չեն ազգային վարժարանաց մէջ միայն ուսուցանել եկեղեցական երգեցողութիւններ, զոր դարերէ ի վեր գրեթէ նոյնը մնացած է :

Չայս ըսելով չ'եմ արժամարներ մեր աւանդութիւնը, թող ուսանին մի քանիներ, որ այդ ճաշակին յատկացնել են, միայն եկեղեցւոյ ծառայելու համար, իսկ միւսներն պետք չէ թողուլ որ խամբին, ասոնք կրնանք ազգին յառաջդիմութեան հոգեսեր համարելով մասնաւոր կարող անձերու խնամոց յանձնել, և արդէն ասոնք իրարմէ զանազանելն ալ խոշոր խնդիր մը կամ արուեստ մը չէ :

Երգեցողութեան ուսումը պետք կ'զգանք

նաև տղայոց պղտիկ հասակէն վարժեցնել ոչ միայն հրազարտութիւնը այլ նաեւ ալ, որուն իւրաքանչիւր գաղափարը կ'անուխն սկսելն է :

Յետոյ լսած եմ այնպիսի կողմից ծնողաց բերնէ սա խօսքերը թէ՛ մեր տղաքներուն չենք ուզեր (չալըճի) ըլլալը, ինչ կոյր ու սխալ դատողութիւն, ես սա գաղափարը ունեցած եմ, թէ այդ կարգի մարդիկ նուազը միայն գինե- ասանց մէջ լսած են եւ կը կարծեն թէ նուազի յառաջդիմութեան վերջն հոս հասած է, շատ հե- րու. արդէն կրնանք այդ կարգի մարդոց ինչ- քան բթամիտ ըլլալը գիտնալ իրենց այդպիսի գիտողութիւնէն :

Նուազի եւ երաժշտութեան ներգործած շը- նորներն անուրանալի են թէ մարդս կը վեհա- ցնէ կ'ազնուացնէ կը վերացնէ եւ կարգ մը զեղի ու մոլի շաւիղներէ կը հեռացնէ լուրջ ու զգա- յուն անձ մը կը գործնէ, այս յատկութիւնները նուազին պարզ քայլերուն մէջ կը ներփակուին որ պաշտելի են մեզ, իսկ այս քայլերուն մէջ երբե- մըն կը հանդիպինք այն տեսակ ստեղծածներ- րու որք միայն Աստուծոյ այդ շնորհով օժտու- րած են, ո՛հ անուառնիկ գանձ մը որուն հարբա- ստութիւնը համայն ազգին յառաջդիմութիւն կը խոստանայ, եթէ զանոնք չի խնամենք եւ մաս- նաւ որ հոգածութիւն չի տածենք, պիտի կորսը- ունին այդ գանձերը, անհոս յուսահատութիւնը կը պատէ զիս, բայց ինչ օգուտ, եթէ այս դանդա- ղութեամբ երթանք զէպի սխալ քայլերու մէջ, հաս մ'ալ չ'պիտի կրնանք արտադրել, եթէ զիս երկու դար ալ անցնի մեր վրայէն, պիտի չ'ու- նենանք նուազի կարող հետոր մը :

Ուրեմն պէտք է ուսուցանել կանանուոր (մեթոտ) ներքե միջոցաւ արեւմտեան նուազի ուսումը, երգերով միասին մեր ազգային եւ մասնաւոր վարժարանաց մէջ :

Օ. Ե. ՊՕՂՈՍԵԱՆ

Տ Ե Ղ Ա Փ Ո Ւ Ո Ւ Թ Ի Ի Ն

— 0 —

Հոկտեմբեր ամսոյ 1 էն՝ ԱՐՇԱԼՈՅԻ Խմբագրատունը և Տպարանը փոխադրուած է Տարպեղ-Մէհապիլ, թիւ 43 տան երկ- րորդ յարկը :

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ա Չ Դ

ԱՐՇԱԼՈՅԻ բաժանորդագրութեան և այլ ամեն կարգի Տպարանական յանձնա- րարութեանց համար ուղղակի պէտք է դի- մել Խմբագրութեան, կամ՝ Գիրութեան համար, ՏԻԱՐ ԿԱՐԱՊԵՏ ԵՐՁՆԿԱՑԵԱՆԻՆ, Ի Շարա Ապտ-իւլ-Ազիզ :

ՏՕՐԱԲՈՐ Ա. ԵԱՔԱՐԵԱՆ

— 406 —

Այս անգամ հաստատուած ըլլալով ի Գահիրէ, կը բնակի Շարա Ապտիւլ Ազիզ փողոց, Ապտինի պահականոցին քով, թիւ 4 բնակարանի երկրորդ յարկը :

Հիւանդ կ'ընդունի տանն օր կէս օրէ առաջ ժամը 9-11, իսկ կէս օրէ յետոյ 3-5. Ուրբաթ օրերը ազգատաց ձրի դար- մանում :

Մասնաւոր խնամքով կը դարմանէ ներ- քին գործարանաց և միզանցքի (ափրո- դիտեան) հիւանդութիւններ :

ՆԱՄԱԿ ՊՈՒՐԿԱԶԷՆ

Տիար Մ. Թորիկեան հետեւեալ յօդուա- ծին հրատարակութիւնը կը խնդրէ, իր ուղ- զակի պատասխանատուութեան տակ :

ՀՆԱՅԱԿ ԹԵՐԹԻՆ ԵՒ ԻՐ ԿՈՒՆԱՀԱՐԻՆ

— 0 —

12 Յունիս 1901 թիւ մեր յատարարու- թեան Գլխատնտեսանցիկ եւ « Լուստոն » Կեդրո- նը, ու Պուրկապի խմբակը չ'ներկայացուց մէկը իր դատը պաշտպանելու եւ իր նուիրական պար- տականութիւնը կատարելու համար :

Պուրկապի և Հնչակեան մասնաճիւղի նախ- կին Անգուստին եւ Կնքապարիս յայտնութիւննե- րն ալ լուրջութեամբ մարտնչիք ու ինչ կարող էիք ընել բացառապէս ճշմարտութեան հանդէպ, չէ՞ որ ստախոսներու եւ խարեմաներու միակ արհեստն է խաւարի մէջ զործելը :

Չենք դարմանար ձեր բռնած այս ընթաց- քին համար, որովհետեւ ուրիշ բան կարելի չէ սպասել կասկածելի անձերէ կազմուած խմբակէ մը որ յեղափոխութեան անունին տակ ծածկը- ուած եւ քաղաքներու ո՛վ գիտէ որ ծակը մտած անկէ դուրս կ'արձակեն պտուղամներ, հրաման- ներ, սպառնալիքներ, լճիւններ ու անոր ա- սոր հասցէին ուղղուած հայտնութիւններ եւ զրպարտութիւններ, որոնք եղբայրը եղբոր գէմ գինեկէ եւ անմոզիկութեամբ արիւնը մտնելէ զատ օգուտ չ'ունենի եւ չ'ունին բնու. :

Ճշմարիտ եւ անկեղծ հայրենասէր կամ յե- ղափոխական խարեմայ ու բուրբոխի ստա- լուրներ հրատարակելով եւ փողովորդին միտքը պղտորելով չի զրադիր, որ անբարոյականու- թեան ամենաստուկին է : այլ կը գործէ, եւ կայծակի արագութեամբ կը հասնի այն վայրը, ուր գործ կայ, ուր ազգային շահերը կը վտան- գուին, ուր յեղափոխութեան ստակները յուժմէ- տաք կը զանազան, ու կը կատարէ իր պարտա- կանութիւնը, թէեւ մենք յեղափոխական եղած չենք, բայց այնպէս կ'ըմբռնենք յեղափոխու- թիւնը եւ մեր նեւ ամեն անոնք, որ քիչ շատ կը հասկնան թէ ինչ է ազգափրութիւնը եւ անշահախնդիր գործունէութիւնը :

Եթէ ես կուսակցութեան մը իրաւունքնե- րը բռնաբարող եղած եմ սարիւնը յառաջ, ո՛ւր էին մինչեւ ցարդ ձեր գործակալ ազգասէր պա- րտները ու իրենց « կուսակցութեան » բն. նոյն իսկ հիմայ ինչո՞ւ չէք պատասխաներ իմ դատուելու հրաւերին ու հրապարակէն փախուսու կուսաք : Այս ամենը ցոյց կուտան թէ դուք, « Հըն- չակ » հրատարակող պարտները ու օգնական « կուսակցութեան » ուրիշ բան չէք, եթէ ոչ խարդախութեան եւ խարեմայութեան մարմնա- ցուած եւ կ'աշխատէք սեւացնել, մոտեւ ամեն պարտուաւոր մարդիկ ստոր հաշիւներէ առաջ- նորդուած :

Ու « Հնչակ » չի մէջ հրատարակել Սահակեա- նի մը պէս արարածին գրածները. — « որուն ինչ ըլլալը ամեն մարդ գիտէ » . — Ըսողները դուք էիք, ապացոյց մ'է բարոյական այն անկման, ուր կը գտնուիք դուք « Հնչակ » թերթը ու Պուրկապի սեւ գործակալները :

Յովհաննէս Սահակեանի մասին գաղափար ունենալու համար կը յանձնարարէք Պ. Հնչա- կիստներուն, կարգալ Տրոյմալման-Վիսնիի անուն Պուրկ. Թերթին թիւ 229, 21 հոկտ. 1899 ին մէջ հրատարակուած պաշտօնական ազգը :

Կարծեմ կը բաւէ եթէ երբէք ակնաջ ու աչք ունիք. կ'սպասենք ձեր ներկայացուցչին կամ ընկերը կարգափոխութիւններուն, պէտք ե- դածը սնորհներու համար :

ՄԻՍՍԱԿ ԹՈՐԻԿԵԱՆ

ԱՉԱՏԱՐԱՐԸ

— 0 —

Պարմէնի հետ ընկերացած կը շրջա- գայէինք ծառուղիի մը երկայնքը, առուա- կի մը եղբրը երկարելով, Կառլէլի Լեռ- նադաշար կը վերջանար :

Պարմէն Ալլաւսի մ'է, որ պատերազ- մէն վերջը Պուստ-Վէնսան գաղթելով, հոն, 1875 էն ի վեր պահակ վիւտորի պաշ- տօնները կը գրաւէ, զօրեղ, գրեթէ ըմբռնի մը կազմը ունի սա, սրուն աշխոյժ և կորովի դէմքը այնպիսի ճոխ պեխերով զար- դարուած է, որ պատիւ կը բերէ մեր զօրու- գունդերուն ամենէն շքեղ ասպազէնին : Սա շատ պատմութիւններ գիտէ և ես ալ շատ անգամներ գնահատած եմ իր պատ- մարանի տաղանդը : Նա մասնաւորապէս նը- կատարողութիւնն է որ կ'ստիպէ ինձ զարգա- ցնել այն լաթեկամութիւնը, որով նա կը պատուէ զիս :

Այդ երեկոյ մեր պտույտը խիստ եր- կար տեւած էր : Մութը արդէն պատած էր դաշտերը և անտառները և վերջապէս գի- շերը եկած էր : Մայիսի սիրուն գիշեր մը, որ ո՛չ շատ ցուրտ ո՛չ ալ շատ սաք կ'ը- ներ և կը լուսաւորուէր այն լուսնկայով որ իրեն քօղը ծառերու գագաթը մանեղով լամբարներ կը ցրուէր սնտառի փոյց և թը- փոց մէջ :

Նայէ՛, ըստ ինձ Պարմէն առուակի մը արհեստական շրվէժը ցոյց տալով, ահա այդ տեղ երկու հոգի մեռնելէ ազատեցի :

Բնազդմամբ իր զգեստին կոճակի ծա- կերուն կը նայէի և կը տեսնէի որ՝ և է « ա- զատիչ » ի շքանշան մը չ'ունէր : Անմիջապէս նա հասկցաւ :

— Մէտալի՛ծն չ'ընդհուրեցաւ ինձ . . . վասնզի այս գործս չ'արարածայնուեցաւ : — Ուրեմն, պատմէ՛ ինձ այդ արտաշարժ շրափրուումը :

Բ, ՄԱՍ

Ձինուրը վայրկեան մը վարանելէ վերջ. « Որովհետեւ յարմար առնեն է պատմե- լու . . . հայա՛ւ : Ինչո՞ւ չ'պատմեմ . . . բայց նախ սկիզբէն պէտք է սկսել, թերեւս քիչ մը երկար կը տեւէ, բայց հոգ չէ :

« Վերջի գարնան ժամանակ, իմ յաճա- խակի պառոյաներուս միջոցին, անփոփոխ կերպով կը հանդիպէի այս ստուակին եղեր- քը՝ կամ մերձակայցանցառուսի մը մէջ ե- թիտասարդ դաստիակարի մը որ հայրի 22 կամ շատ շատ 23 տարեկան հասակին մէջ կ'երեւէր : Նա խարտեալ, նուրբ և բարձրա- հասակ էր, և յաճախակի աղբակներ թիկ- նոց մը հարած էր և զուլիւր կը կրէր բար- ձր և կակուղ թաղեայ գլխարկ մը, թէեւ սա սիրուն դէմք մը ունէր բայց ստօգոյն և գրեթէ անծօրուս էր. իր կապուտակ աչքե- րուն մէջ, խոտին ծայր քաղցրութիւն մը կը փայլէր, բայց նա երբէք ամենափոքր ակ- նարի մը իսկ չէր նետէր անցորդներուն վը- րայ :

Իր աշխատութիւնը կարծես զինքը բո- լորովին խորատուած էր. սակայն և այնպէս այս տղան յետին ծայր երկչոտ կը թուէր :

« Արդ՝ երեկոյ մը՝ տեսայ զինքը դե- ուստի աղլկան մը հետ, որ նկարակտաւին վրայ ծոած անոր հետ կը խօսեր : Հիմաւի էր աղլիկը . . . և շատ գեղեցիկ : Նէ թխա- գոյն էր այնպիսի, որչափ երիտասարդը խար- տեալ : Խոշոր աչուկները կը լուսաւորէին իր դիմանկարը և ճոխ մազերու հիւսակ մը, գլխէն ցցուելով իր հասակէն վար կ'երկա- րէր : Իրմէ 20 քայլ հեռուն կար կին մը դաժմանաղէմ, անուշտ սպասուհին ըլլալու էր սա որ մանիշակի խորձեր կը պատրաս- տէր :

« Ինչպէ՞ս այս երկու արարածները ի- րար ճանչցած էին : չ'եմ գիտեր, սա միայն գիտեմ թէ այս երկուքը այնպիսի հիաս- քանչ զոյգ մը կը կազմէին որ անզգայ մար- դու մը իսկ զարմանք կը պատճառէր :

« Արեւուն մարը մտնելու միջոցին էր, երբ արդէն զովորութիւնը սփռուած էր անտառաց մէջ, տեսայ զանոնք որ ճամբու մը վրայ լուռ ու մունջ կը քայլէին և սպա- սուհին ալ իրենց կը հետեւէր : Ասոնք քիչ կը խօսէին, և իրենց գէմբերուն վրայ այն- պիսի ցուալի տխրութեան մը արտայայտու- թիւնները սփռուած էին, որ հանդիպողը կը ջանար փնտռել այն ծածուկ վիշտը, որ այս երկու դեռուալոյս և սիրուն երիտասարդնե- րը պատուէ էր :

« Երեկոյ մ'ալ երբ միեւնոյն անտառի մէկ ճամբայէն կուգայիս յանկարծ նշարե- ցի այս երկուքը որ դառն արտասուքներ թափելով կ'ուլային :

« Թոյլ տու՛ր ինձ բնէ թէ յաճախ այս- պէս իրարու հանդիպելով է որ զիրար ճանչ- ցած և բարեկամացած էին : Նախ քաղաք- քաղաքութեամբ երկու կողմէ բարեկեր կը ուղղուէր : Չե՞ս երեւակայի միջէ այն հա- մակրանքը որ այս երկու տղաքները ինձ կը ներշնչէին :

« Վերջապէս, վերջին Յուլիս ամսուն մէջ օր մը գիշերը Շահանթօսն հասնելով, քիչ մը առաջ քեզի ցոյց տուած արհեստա- կան շրվէժիս մօտ նշարեցի երկու մարդու ստուերներ որ առուակին վրայ կը կախուէ- ին : Իսկոյն այս երկուքն ալ ճանչցայ և ի- րենցմէ չ'նշմարուելու համար 20 քայլ հե- ռուն գտնուող թառուսի մը ծառերուն ե- տին պահուրեցայ և ակամօ գնեցի՝ սա խօսակցութիւնը լսեցի որ մերթ ընդ մերթ հեծկտաճայն լացերով կ'ընդհատուէր :

— « Ժէօզօթէթ, և որովհետեւ քու ծը- նողքը կը մերժեն մեր երկուքը իրար մի- ցընելու, զի աղքատ եմ, ուստի ինձ համար աւելի լաւ է մեռնիլը : »

— Ես քեզ հետ կ'ուզեմ՝ մեռնիլ, Ռէյ- մօն :

— Ո՛չ . . . — Այո՛ . . . Դեռ ծաղիկ հասակիդ մէջ ես դու . . . քիչ ժամանակ վերջը ուրիշ մը կրես սի- րել . . . ինձ կը մտնաս . . . շու՛տ :

— Երբէ՛ք, ամենեկին : Մնաս բարեաւ, ըրաւ յանկարծ երի- տասարդը և շուրջ նետուեցաւ : — Ռէյմօն, յաւիտենականին մէջ կը միանանք իրարու, պոռաց դեռատի աղլիկը, ինք ալ շուրջ նետուելով :

Հաստատ՝, սա քեզի խոստովանալը մը ըլլայ բնէ թէ այս սրտայոյզ տեսարանը այնչափ շուտ տեղի ունեցաւ որ արիւնս ե- րակներուս մէջ ստուեցաւ : Սուտ չ'ըսեմ, այս երկու դժբաղդներուն նետուած տեղը հայել շուրջ մէկ մէթը բարձրութեամբ ե- կած էր. ասոր հետ մեկտեղ, գիտե՛ս, երբ մարդ կ'ուզէ մեռնիլ նոյն իսկ կրնայ դաշ- տի մը մէջ խեղդուիլ :

Շուտ մը ինքզինքս ամփոփելով ես ալ նետուեցայ շրին մէջ այս երկու թշուառ- ները զատուած համար և քանի մը վայր- կեանէն Ժօրժէթը և Ռէյմօնը միասնապէս նետով մարդին վրայ նստեցուցի :

Երբ այլևս քալելու կարող եղան, դա- նոնք իմ տնակս տարի, ուր կինս աղէկ գէշ իրենց թըլած զգեստները չորցուց :

Գիշերը վրայ հասած ըլլալով, անոնք կրնային երթալ առանց մէկէն նշարուե- լու :

— Ո՛հ, ինչո՞ւ մեր մահուան արգելք ե- զար ըսաւ ինձ տխրութեամբ դեռատի աղ- ջիկը . . . որովհետեւ ծնողքս դէմ կը կենան իմ անուանութեանս . . . ամենէն կարճ մի- շոյնին անձնապատկանութիւնն է . . . Այս երե- կոյ հայրը կրցայ ձօրս և սպասուհին հրա- կողութիւնէն խուսափել . . . և հոն գայած էի մահ փնտռելու . . . Մենք նոյնն պիտի փորձենք և թերեւս վատ, որովհետեւ մեր մայր որոշուած շատ հաստատ է : Լաւ կը հա- մարին յիշմին մէջ միանալ իրարու, քան իրարմէ հեռու ապրել :

— Պիտի սկսի՞ք, ըրի, յոնքերս պըրս- տելով . . .

— Անո՛ւշտ :

— Կ'երգնու՞մ որ այս լաւ միջոց մը չէ . . . դուք երկուքնիտ ալ հետեւեցէք ինձ մինչև ոստիկանութեան դուռը :

— Ո՛հ, ըրաւ, պաղատագին, աղլի- կը, ինայէ մենէ այդպիսի գէշ գայթակ- ղութիւն մը :

— Է՛հ, լաւ ուրեմն, հասկցուր ինձ ծնողացը բնակարանը հոն պիտի վերադար- ձնեմ՝ զքեզ : կամ ձեր տունը կերթաք կամ ոստիկանութեան դուռը, ո՛րը կու- զէք ընտրեցէք :

— Որոշ ձայն մը կը հանէի. վերջապէս նէ՛ որ պէտք էր հնազանդիլ ինձ քանի մը գիմաղբութեան խօսքեր ըսելէ վերջ, նա հասկցուց ինձ իր հասցէն. Մէն Մուսիս փողո- ցը կը բնակի եղբր :

— Հետեւէ՛ ինձ, օրիորդ, գտնով քեզի պարոն . դու ալ բանդ գնա՛ շատ :

« Քառորդ ժամէ մը վերջ, յիշեալ փո- ղոցը հասնելով պերճ մարմանոցի մը դու- ուր կը գարնէի, որուն առաջը ընդարձակ պարտեղ մը կը սարածուէր : Ժօրժէթի հայրը հարուստ վաճառական մ'էր որ այն օր Փարիզի մէջ շատ գործեր ունենալուն պատ- առաւ, երեկոյն ուշ մնացած էր. ուստի մայրը ընդունեց զիս :

Խեղճ կինը իր ծաղկան պէս աղլիկը այն վեճակին մէջ թըլած, թառամեալ տեսնե- լով, դող մը եկաւ վրան : Արդէն դեռ ժամէ մ'ի վեր անոր աներևութանալը գիտ- ցած էր. սենեակին մէջ կարծելով զայն ան- հոգ էր, և երբ պատճառու մը սենեակի մըտ- նելով զայն հոն գտած չէր, ամօժ ցաւ մը պատճառ էր զինքը, արտասուքի տարակ մը տեղաց իր աչքերէն և նէ նստարանի մը վրայ մարած ինկաւ : Վերջապէս պէտք եղած խնամքները ըրի և երբ խեղճ գլու- խը եկաւ, ըրով երթալով ցած ձայնով մը իրեն ըսի :

—Տիկին. թէ և ձեռք խրատ տուող չեմ բայց երբեմն անիրաւութիւն է որ կը գործուի աղկան մը սիրոյն արգելք ըլլալով ես ձեռքի սարսի կուզեմ թէ օրիորդ Թորթեթ վերստին պիտի սկսի իր անձնասպանութեան փորձը եւ թէ իր ամուսնութեան հաւանութիւն տայիք թերեւս մեծ դժբաղդութենէ և շատ մը սրտի խայթերէ ազատ կը մնայիք սակայն և այնպէս իր սիրած մարդն ալ ծանօթ է ինձ և եթէ թոյլ կուտայք, պիտի համարձակիմ ըսել ձեզ թէ, նա՛ պարկեշտ արհեստաւոր մ'է, և թէ արժանի է ձեր աղկանը ամուսինը ըլլալու :

—Ո՛հ. կ'ուտամ անոր իմ աղջիկս, գլխուս վրայ, պոռաց խեղճ մայրը, ձեռքերս շատ անգամներ սաստիկ սեղմելով, որով չնորհակալութիւնները կը յայտնէր ինձ :

Գ. ՄԱՍ .

Պագմէն լուսը, և իր մուկը պառնայ : Եւ տեսնէ որ այս խոսակցութիւնները զմեզ մինչև հասնելու լեռնազաւոր տարած էր :

—Ամուսնացան վերջապէս . հարցուցին ընկերոջս :

—Այո՛ . դիրենք ջրէն ազատելէս ամիս մը վերջը : Իմ երկու գիւղացիներս այժմ Սէն Մուսիս փողոցը սքանչելի տուն մը կը բնակին Աղջիկը լաւ օժիտ մը առու բայց երիտասարդը կարծեմ թէ դեռ նոր կ'սկսի իր արհեստովը անուն հանել :

Իրենց ամուսնութենէն քանի մ'օրեր վերջը երբ անոնց տանը առջևէն կ'անցնէի նկարելը կանչեց զիս և պարտիզին մէջ գալարազարդ հովանոցի մը տակ նստեցուց սեղանի մը քով որուն վրայ զքանչելի զինուով լի գաւաթներ շարուած էին : մէկ մ'ալ նայեմ որ իր դեռուտի կրնը եկաւ, խնդափայլ դէմքով մը. ինձ տեսնելուն պէս նէ խնդալ սկսաւ և անմիջապէս վերջը, Ռէյնոն գաւաթ մը երկարելով ինձ անկեղծ զուարթութեամբ մը ըսաւ :

« Ի՞նչ յիշե՞ս Պագմէն պապա, առուակի եղբրքի ողբերգական խոսակցութիւնը, լուսաւոր դիրեքը իր անձնասպանութիւնը, մեր մեծնիլ ուղեւոր յամուսնութիւնը . և սպանուելիքը : Լաւ ուրեմն . . . Ուստի այս ամենը զաւելու մ'էր . Թորթեթ զիտցաւ քու բարի մարդ ըլլալը և տեսաւ որ մեզի օգտակար կրնայիք ըլլալ . առոր համար այս թատերգութիւնը կարգադրեց իրեն ծնողքը նեղը ձգելու համար :

Եւ տէր վկայ, պէտք է խոստովանի թէ մենէ իւրաքանչիւրը շատ լաւ կատարեց իր դերը, և ահա այժմ երկուքս ալ իբր դերասաններ երջանիկ ենք, վասնզի վարագոյրը յալողութեամբ գոցուեցաւ :

—Այս բառերը արտասանած ատենը խեղճ զինուոր քթին տակէն կը խնդար :

—Եւ դու, որս պահած չի՞ս այժմ առանց դէմ, այսպիսի սուտ անձնասպանութեամբ մը քեզի խաբէնուն համար :

—Ո՛րս պահե՞մ . . . Տէր ողորմե՛ա . երբէք ընդհակառակը շատ գոհ եմ որ իրենց երջանկութիւնը նպատակաւորեցի

Միայն . . . կը հասկնամ . . . շատ լաւ խելք մը ըրի, ամեն տեղ երթալով իմ այս « յրէ ազատուում » շտարածայնելովու :

Թարգ . օճնիկ

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

Պէրճիկ . — Պէրճիկ ըսնական և Ռուսական հիւպատոսները մասնաւոր քննութիւն մը բացած են, այն տեղ պատահած խառնակութեանց մասին և իւրաքանչիւրը իր կառավարութեան մատուցած է քննութեանց տեղեկագիրը :

Այս խառնակութեանց նկատմամբ կարգադրութիւն մը ձեռք բերելու համար երկու դաշնակից տէրութիւնները դիւանագիտական միջոցներով պիտի վարուին Բարձրագոյն դրան հանդէպ :

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԻՌԱՅԸ . Անգղիական կառավարութիւնը նախաձեռն մը զրկած է պարսկական ծոցը, Գիւլիսթը և Եէլի Մուսպարէքը պաշտպանելու համար Թուրքական ստանդարտիւններուն դէմ, ըստ որում Թուրքիա՝ Էտէմփօ փաշայի հրամանատարութեան տակ 30,000 զօրք հաւաքած է Պուշթարի մէջ :

Թուրքիա Մուսպարէքը սուլթանի հրապարակներէն կը նկատէ, պատճառելով թէ՛ նա Թուրքական դրօշակը կը ծածանեցնէ իր գաւառներու և վիճակաց վրայ :

Մուսպարէքը կը բողբէ այս պատճառաբանութեանց դէմ, առարկելով թէ թրքերական դրօշակը ինք իբր իսլամութեան խորհրդանշան կը գործածէ և ոչ ուրիշ բան :

ԿԱՌԻՆ . — Թուրք իշխանութիւնը կարճ ժամանակէն հիւպատոսարանի թարգմանին արձակուողով ֆրանսա մեկնիլ ուղեւորու արգելք հանդիսացած է :

Պ. Պատմ գայն արտօնած է մեկնիլ ինչ որ ալ ըլլայ, իր պահովութեան համար վախի պատասխանատու բռնելով :

ՆԱՓՈՒԻ . — Ժանտախտի վեց նոր դէպքեր տեղի ունեցած են Նափոլիի մէջ :

Տեղւոյն բժշկական վարչութիւնը կը հաստատէ թէ ժանտախտը այդ քաղաքին մէջ երկուսու պատճառ եղած են Աղէքսանդրիայէն հասնող երկու շագենաւորու նաւատիները :

ԱՆԿՈ . ԹԻՔԱԿԱՆ ՄԻՋԱԳԵՊ . — Սիւմլայէն կը տեղեկացնեն թէ Քիւէյթի մէջ կատարեալ հանդարտութիւն կը տիրէ : Նէճատի էմիրը քաղաքին վրայ յարձակել կըսպանար, բայց Անգլիական նաւու մը ներկայութիւնը արգելք կ'ըլլայ իր ծրագրերը գործադրելու :

ԱՐԻՆԱԼԻ ԿՈՒԻՒՍԱՆ . ՅՐԱՆՉԻՍՏՈՒՄ . — Մարտի 5-ը քաղաքը հեռագիր մը կ'ըսէ թէ 500 զորքաւորներու խումբ մը որ Հոկտեմբեր 1-ին վաճառաշահ թաղի մը մէջ ցոյց մը կ'ընէր, ճամբան յարձակած է սոսիկանական խումբի մը վրայ :

Գուճաղուները արձանակի հարուածներ քաշած են, որով սոսիկաններն ալ պարտաւորուած են իրենց զէնքերը գործածել տասը վայրկեան յետոյ, որու միջոցին 200 է աւելի հրազենի հարուածներ փոխանակուած են, հաստատուած է թէ մարդ մը ըսպանուած և 15 հոգի ալ վիրաւորուած են որոց մէջ է նաև սոսիկան մը : Մտաւայ մեծ խանութներու ապակիները տուած գնդակներէն կտորուած են : Գործադուլ ընդհանր կը սարսփեցնեն քաղաքը . անիշխանութիւնը կը տիրէ :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Քերթառն 5 հոկտ . — Փոքրիկ ճակատամարտեր տեղի ունեցած են Բարի գաղթական վաշի և Օրակի արևմտեան, արևելեան ու հարաւային կողմերը . Պոքրերը մեծ կորուստներ կրած են : Բրեսիոս հրամանատարը պակտուած է շատ մը անուանի հրահրանաւորներ ալ կորուսած են : Քրիսթիանիքը երեխ յուսանաւ փորձեր ըրած է Օրակի անցնելու եւ Բարի գաղթականը մեկնելու համար, սակայն ետ մղուած է նա :

Լոնտոն 5 Հոկտ . — Պաշտօնական տեղեկագիրներէն կ'երևի թէ, պատերազմի սկիզբէն ի վեր անգլիացոց կորուստն է 75,562 հոգի, որոնց 52,273 ը արգախեցած է և որ ռոշակի սակ միացած են :

Լիզբօն 5 Հոկտ . — Հետեակ, միաւոր և բնականօրինակ գործերու շուկան մը ընդամենը 828 հոգի մեկնած ին Լորէնցօ-Մարիէ տարաւ ի Թրանսիլվայի անձնանագրուներու փոքրագոյնէն պահակախումբը գործակցելու համար :

Կ. Պոլիս 5 Հոկտ . — Սուլթանը վերստին արգիլած է երեսնամեակ զայն հետեակը, 3 ամիսէն աւելի հոն կեկալը :

Իրու՛ն 5 հոկտ . — Սուլթանին փեսան Տուսուս Մահմուտ քաշա, որ աշմ կը բնակի Բիերրի անտառանցին մէջ շատ սիրուած է, և գիւղացիները զայն կը պահեն Կ. Պոլիսէն եկող քաղաքի յրեւելու դէմ, որուն կ'ուզեն Սուլթանին խոստովանելու նախադրեց իրեն :

Տուսուս Մահմուտ քաշա որոշած է միջոց Իրու՛ն մնայ, որովհետեւ անոր կրիմեան նրպասաւոր է իրեն :

Մոլդաւիայի մայրաքաղաքը որ անանպէս Սուլթանին երեսն ինկած է՝ բռնաւոր ստրճե մը գոյց մնալու համար անգլիական շրջանակով մը խոյս տուած է Նիս երաշարու նպասակաւ :

Մայրաքաղաք անպատճառ Իրու՛ն ստրատու է քառակուսի որպէս խառնակիցի Մահմուտ քաշայի հետ ժեօն-Թիւրքերու յառաջիկայ մեծ ժողովի մասին, որ հարստականաւոր անոյս վերջին օրերը սեղի պիտի ունենայ :

Բարից 6 Հոկտ . — Վերապահութիւնները որոնցով քուրճիս ընդունած է Լորակիսի խնդրոյն կարգադրուելու՝ իրենց մէջը կը պատրաստեն կատարելու գեղջ մը ընդունուող գումարէն :

Յրանաւ ալ մերժած է այդ անուանաւորները, և կը պնդէ պահանջուած գումարին, աշխիքէ 344,000 ոսկիին, անբարոյցի վճարմանը վրայ :

Կայսրուհի Բիլա Մեկնէն Երանայի կողմէն ևն ձեռնարկ մը :

Կ. Պոլիս 6 Հոկտ . — Լորակիսի խնդրոյն վերաբերող Երանայի տեղեկագիրը քաշաւորու է ազդու եղանակով, և անբարոյցապէս կը պնդէ անխնայական պահանջներուն վրայ :

Ռուսիա Բ. Իրան յորջ ոչադրութիւնը կը հրաւիրէ ՀԱՍՏԱՍԱՆԻ կազմուելու վրայ :

Ռուսիայի 6 Հոկտ . — Վեյրոն գորակարր որ 2 ինտեստենտներ վերադարձաւ՝ Պ. Լուպիի հետ մտնեց :

Բարից 7 Հոկտ . — Կիւսնուի թէ Սեւեկայի Սեւ-Լուի քաղաքին մէջ 2 մահեր պատճառով են զեղին ջերմէն :

Բարից 7 Հոկտ . — Թանկ կը ծանուցանէ թէ Երանայ տեղեկագիր մը որի կամ է Բ. Իրան, որով կը պահանջէ Լորակիսի անկեղծի վճարուելը :

Թանկ կ'ընդհանրանէ թէ Բ. Իրան շարունակական զիսխուսի մեծերը կ'արդարացնեն արդի վարձուները :

Սիւնյա 7 Հոկտ . — Անգլիականներն Երիւրը մեղար :

ՓԱՐԻՉ 8 Հոկտեմբեր . — Յրանայի անկեղծի անգլիացի Պ. Բիեր Լօրի, ծանուցապէս հիւանդ է Երիւրի մէջ :

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Աղէքսանդրիա Մ. Պ. — Նամակը տեղւոյն եկեղեցին զրկուեցաւ : Կրօնք անկէ ստանալ : Կիրիլ Ս. — Մեր թերթին այս մէկ երկու անգամ յապաղուելու պատճառը, գրաշարին առանց լուր տալու « Փարոս » թերթին աշխատելու գնալն է : Մէկ շաբաթէն կը հասնի մեր նոր կրօնքը, հետեւաբար կը կանոնադրուի : Գաւառները հաւեն ձագրեր աչուքը կը համբնեն . այդպէս ընելը լաւագոյն է

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽՏԻՎԸ . — Ն. Բարձրութիւնը Երկու շաբթի օրը Ռուսիայի պալատը գնաց նախարարական ժողովին նախագահելու համար :

Մայր Խտիվուրին առաջիկայ ամսոյ սկիզբները պիտի թողու Պոլիսը, Խտիվական մահրոտու զբօսանաւով Եգիպտոս դառնալու համար :

ՄՈՒԻՅՈՒՐ ՓԱՇԱ . — Օսմանեան պատերազմ Ն. Վ. Լազի Մուխթար փաշա այս ամսոյ վերջերը Գահիրէ պիտի ժամանէ :

ՊՕՂՈՍ ՓԱՇԱ . — Ն. Վսեմութիւն Պօղոս փաշա Նուպար Նոյեմբերի սկիզբներէն Երազայէն պիտի վերադառնայ :

Կարծենք Ն. Վսեմութեան վերադարձով վերջ մը կրնայ գործի այն անախորժ վէճերուն, որ ժամանակ է մը ի վեր բաւական կը զբաղեցնէ մէկ քանիներու մտքերը, որոնք թերեւս աւելի Ն. Վսեմութեան բացակայութենէն օգտուելով, իրենց գործի կռուոյններով հրապարակը կ'ողողեն առողջուտ :

ԽՆԱՅՈՒՎԱԿԱՆ ՄՆՏՈՒՅԿ . — Տարույս Մարտի սկիզբէն մինչև 1 Հոկտեմբեր ուլթն ամուսնան միջոցին, Քիլիսիան խնայողական անուակին ի պահ տրուած գումարները 60,000 լիբլի կը հասնին :

ԲԱՆԱՍԵՐ Հետեւեալ ծանուցումին հրատարակութիւնը կը խնդրէ իր պաշտօնակիցներէն :

ԲԱՆԱՍԵՐ ԱՄՍԱՐԵՐՔՈՒ ԱՅԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

« Բանասէր » յարգելով ժողովրդական և գրական անձոնց գիմուսները, կը խոստանայ յատուցել այս տարեշրջանէն (1902 Յունուար) սկսեալ՝ հետեւեալ նոր ծրագրով հրատարակուելու :

Ա. « Բանասէր » նախ պիտի հրատարակէ ազգային յատուցալուծութեան վերաբերեալ խորագրական տեսութիւններ :

Բ. Բանասիրական յօդուածներ ազգային պատմութեան և մատենագրութեան վերաբերեալ :

Գ. Օտարագրի նշանաւոր հանճարներու գրուածոց թարգմանութիւններ :

Դ. Հայ աշխարհագրական և ազգագրական յօդուածներ :

Ե. Նոր հրատարակուած գրքերու վերայ քննադատական տեղեկութիւններ :

Զ. Լեզուաբանական և ստուգաբանական յօդուածներ :

Է. Ազգային լրագրութեան մէջ տեսնուած կարեւոր յօդուածներու վրայ դիտողութիւններ :

Ը. Գիտական նորութիւններ :

Մասնաւոր կերպով կը յայտարարենք մեր ընթերցողաց որ Յունուարէն սկսեալ « Բանասէր » վերոյիշեալ ծրագրով ԱՄՍԱՐԵՐՔՈՒ պիտի վերածուի, իւրաքանչիւր անգամ տալով 32 էջ : Եւ ինչպէս որ կանխախոսացեք էջեր . « Բանասէր » ի ինչ ինչ յօդուածները պատկերազարդ պիտի հրատարակենք :

Թերթին զինն առ այժմ նոյնը կը մընայ, այսինքն տարեկան 15 ֆր . — 6 ուրբիլ . բայց եթէ բաժանորդներու բազմութիւնն զմեզ խրախուսէ այն ատեն կը խոստանանք 10 ֆրանքի իջեցնել :

Մեր հասցեն է BASMADKIAN 112, BD ROCHECHOVART. PARIS (18)

ՀԱՅ ԹԵՐԹԵՐ

— ԱՐՄԵՆԻ . — Չէյթուրի հերոս, ակահաւորն Աղասի, որ երեք տարիներ է ի վեր Փարիզի ճարտարապետական վարժարանին կ'աշակերտէր, վերջերս ստացած է իր երկրաչափի վկայականը, շատ յաջողակ քննութիւն մը անցնելէ վերջ :

Ուրախութեամբ կը տեղեկանանք թէ՛ կը գրէ ԱՐՄԵՆԻ, շրջանաւորներու անանդական խրախուսութեան մէջ, ուսանողները պատուոյ նախագահ ընտրեցին Չէյթուրի երիտասարդ ու համակրելի հերոսը . պերճախօս ատենախօսութեան մը մէջ, իր հիացումը յայտնեց Յրանայի անձնակազմի նկատմամբ, որ իր պաշտպանութիւնը կը շնորհէ հարտասարեալ ազգի մը :

Այս բանախօսութիւնը ջերմօրէն ծափահարուեցաւ : Ապրիլ ազատն Հայաստան » (°) ազգայիններով . . .

ԳՈՒԹԱՆ. — Ստացանք Գուրբան հոգա- գործական հանդիսին վեցերորդ թիւը՝ օգ- տակար պարունակութիւններով:

Գուրբան կ'ազդարարէ թէ՛ պատճառով մը՝ ԳՈՒԹԱՆԻ 4 րդ. թիւը 15-20 օրէն պի- տի դրկէ 7 րդ. թիւին հետ մնացած 6 թի-ւերն ալ յալորդարար, ուստի բաժանորդ-ք մինչև տարւոյս վերջ ստացած պիտի ըլլան ԳՈՒԹԱՆԻ ամբողջ 12 թիւերն:

— ՀԱՅՐԵՆԻՔ. — Պօսթընի Հայրենիքի Եւրոպայի շաբաթաթիւնը, կուսակցութեանց Միու- թեան համար հետեւեալ տեղեկութիւնները կուտայ:

Երեք կուսակցութեանց պատկանող խումբ մը յեղափոխականներ—որոնց մէջ նաև ՉԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՅ Ի և ՀԱՅՐԵՆԻՔԻ խմբագրական մարմիններու անդամները— խանդավառ կարգազրուցեան մը համաձայն, Տեպտեմբեր Ուրբաթ Իրիկունը հաւաք- ուեցան խորհուրդ թէ՛ ինչ միջոցներ կրնան գտնել համերայնութիւն մը գոյացնելու համար Ամերիկայի երեք յեղափոխական մարմիններու և միութեան իրազորման նպաստելու երեք կուսակցութիւններու մի- ջև:

Ժողովը ընկերական խորհրդակցութե- նէ մը ետք հետեւեալ թելադրութիւնները ըրաւ:

1. Չայն Հայրենեացի և Հայրենիքի խմբագրութիւնները դադարեցնեն ասկէ ետք կուսակցական — Անհատական վեճերը:

2. Երկրորդ գումարում մը ունենան առաջիկայ Ուրբաթ օրը Սեպտ 13, միու- թեան խորհրդին մասին խորհրդակցութիւն- ները շարունակելու համար:

— ՉԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՅ. — Ասկէ առաջ ծանուցած էինք թէ՛ Պէյրութի մէջ երկու թուրք պաշտօնեաներ Ռուսական Հիւպա- տոսարանը ապստամբ էին, իրենց հա- մար ձերբակալման հրաման տրուած ըլլա- լուն համար:

ՉԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՅԻ մեզ հասած վեր- ջին թուոյն մէջ կը կարգանք թէ յիշեալ երկու թուրք պաշտօնեաները Ռուսական նաւով մը Պոլիս տարուեր են ուր սուլթա- նին առջև պիտի հանուին, և կը կարծուի թէ՛ փատիլաչը իր գահակալութեան տարե- թարձին առթիւ երկուքին ալ պիտի նե- րէ:

ՍԹԱՌ ԼԱՅՔ

ԼՈՆՏՈՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնույ 1843

Բացարձակ ապահովութիւն. — Չափա-ւոր ապահովագրին. — Ապահովագրի հնու- թեան համաձայն շահու առաւելութիւն. — Իրաւանց պահպանութիւն՝ ապահովագրի վը- ճարմանց յապաղումի պահուն. — Չախող պարագաներու մէջ անմիջական հաշուեյար- դարութիւն. — Եւրոպայի բաժանում ամեն Հին ԳՍԱՐԻՆ մէջ անգամ:

Ս. ԼԵՕՆԱՐ

Ընդհանուր ներկայացուցիչ Եգիպտոսի

ԳԻՐԳԵՐ ԵՒ ԹԵՐԹԵՐ

Ամերիկայի մեր ազգայնոց կը ծանուց- ուի թէ՛ Երրորդ տարեշրջանի սկիզբէն « Արշա- լոյս » Ի Գործակալութիւնը ստանձնած են Ի Շի- գակօ, Մ. Մ. Գարակապուտեան և ընկ. որոնք բացի « Արշալոյս » էն:

Բաժանորդագրութիւն կ'ընդունին նաև հետեւեալներէն:

ԱՆԱՀԻՏ, ազգային, գրական և գեղար- ուեստական ամսագրութ. տարեկան բաժանոր- դագրին տոյլար 2:

ԳՈՒԹԱՆ, հանդէս հողագործական և ճար- տարուեստական, որ կը հրատարակուի փարե- ղի մէջ ամիսը մէկ անգամ, Տարեկանն է Տ. 3. ճանապարհածախսով միասին:

ԱՐԱՐԱՏ մեր միակ էին կրօնական Ամա- ղիբը՝ որ կը հրատարակուի Մ. Էջմիածին: Տա- րեկանն է մէկ տոյլար միայն:

Նամակագրոյ՝ կ'ընդունին, երբ ապսու- ղանքը 50 սէնթ և պակաս է. իսկ աւելին հա- մար պէտք է դրամ դրկել Money orderով և կամ register նամակով: Յանձնարարութիւնն- րը կ'անի կը կատարուին:

Տեղեկութիւններու համար դիմել

M. M. KARAGAVOORIAN et Co.

61 West Huron St.

CHICAGO III

ԳԱՌԼՕ Մ. ՊԱՍՄԱՃԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐՔ

ՕՔԷԼ ՍՈՆՖԵՐԱԹՕ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

Պատիւ ունինք ծանուցանել արգոյ հասարակութեան թէ վերջերս հաստատուած ըլլա- լով հրապարակս, կ'ընդունինք և կ'ստանանք ամեն տեսակ և ամեն ազգի ապրանք յանձ- նարարութիւնը, ինչպէս ժամացոյցի, զոհարեղենաց, արեւելեան և եւրոպական դանազան տե- սակ գունաւոր և ճերմակ քարերու, Գոյովիական Ծոծոկրաֆներու, ինչպէս նաև գրուած և անգիր խողովակներու — գովան — (մեծաքանակ) . եւրոպական նրբաշիւս կողովիկներու և հո- տեղեկաց և այլն:

Մասնաւորապէս համաձայն ինկելով Պոլսոյ Անտէլիպ (Մարտիրոս Պէյլէրեան) տան հետ, որուն ապրանքները մեծ գնահատման արժանացած են նոյն իսկ եւրոպական հրապարակաց վը- ռայ, միշտ ի միջեր ունինք յիշեալ հանրածանօթ տան ամեն տեսակ ապրանքները. ինչպէս Re- producteur Andelib (Ֆոնօկրաֆի աղեղ) որ անմրցելի է հրապարակին վրայ, և Գոյովիական ֆոնօկրաֆներու ներկայացուցիչ Մ. Պասաճօնի քանակազման առաքիւյն եղած է:

Մեր արամարութեան տակ ունինք Անտէլիպի գործարանին զանազան նուագներն. ինչ- պէս Մանդիլն, Բանն, Ուր եւն. և ֆոնօկրաֆի համար տաճկական եղանակներու վրայ չափ- ուած հին և նոր վարպետ երգողներու ընտրի Գոյովաներ:

Կ'ստանանք կատարել Մաքսային ամեն տեսակ գործողութիւնք փութով և չափաւոր փոխարինութեամբ:

Կը գանձենք զանազան երկրներու փոխանակ գրքեր:

Բաց աստի ընկերութիւնս Լոնտոնի, Պոլսոյ, Գահիլէի, Նափայի և Երուսաղէմի մէջ թըղ- թակեցնելու ունենալով, կ'ստանանք այդ տեղերուն համար ամեն տեսակ ներածում և արտածում:

Մեր հասցէն է CARLO M. BASMADJIAN et Cie. Okello Monferrato Alexandria



Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՈՒՅՈՒՄԻ Ժ. ՆԱՅՏԼԻԵՆԻՔԻ

Պալաքի փողոց. Խաչնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշդ դիմաց, Գաֆէ Տը Լա Պուրսի կից:

Հին եւ նոր ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ 8500 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Մինիկի ներս են և ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է:

400 հ աւելի վկայականներով և մշակութեամբ վարձատրուած, Երաշխատեալ մեքենաներ:

ԱՄԵՆԻՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 Ի Տիեզերախալ արտուստանդիսին մէջ ստացած է:


ՀԱՊԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՅՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ

ՀԱՅՐԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՅՈՅ ԶԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՆՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՅ

ՀԱՅՐԱՅԹԻՉ Ե. Բ. ՆՏԻՎԱՆԻՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԵՐ Ի յաշխանշիմ:

ԳԻՆ ՉԱՓԱՌՈՐ



Չիք դաներ և նորոգու- թիւններ, ՍԻՆԿԵՐ մեքենա- յից համար, յաճատորդաց տուններուն մէջ:

Վճարմանց Դիւրութիւն

Փոխանակութիւններն մեքենայից և նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԻՆ ՀԱՐՈՒՄՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՌՈՒՄԸ ԴՐԱՍՄԱԳՆՈՒՄ 1 ՄԻԼԵՄ 563, 961 ՏԱՃԱՐ ՏՐԱՒԷ

Ապահովագրութեանը կը բաժ- նէ ամենէն աւելի շահաբաժինները: Ապահովագրութեանը արգէն վճարած է կամ ի նպաստ իրենց գու- ռարած է 3 ՄԻԼԵՄ 563, 961 ֆրք. որ գրեթէ աշխարհի ուրիշ որևէ ըն- կերութեան մէկ միլիար աւելի է:

Պ. Պ. ԲԻՐՉԻՍ ԵՒ Ժ. ՎԱԼԻՅԻՇ ԸՆԳՏ. ներկայացուցիչք Ի Գահիլէ

ԳԵՈՐԳ ԵԿԱՒՕՅ Դեր-Գործակալ Ի Գահիլէ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

ԱՐՇԱԼՈՅՍԻ

ՇԱՐԱ ԱՊՏԻՒԼ-ԱՉԻՉ ԵՎ ԶԻՐԸ

Օսանկոյն Կոնստանտինոպոլիսի փողոցին մէջ

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅՅՈՍ 1900

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

Ե. ԹՈՐՈՍՅԱՆ

ԱՐՇԱԼՈՅՍԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻՆ մէջ կը պատրաստուին Հայրենի և Երուսաղէմի յեղուներով ամեն տեսակ հրատարակութիւններ, մասնաւոր խնամով:

Դիւրեր, Կանոնագրութիւն, տեղեկագրութիւն, շրջաբերականներ, Հրատարա- գրեր, Տոմար, Այլաբարձեր, Մանագրներ և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ կ'ընդունուին չափաւոր գներով:

Յանձնարարութիւնք եղած պատուի պէտք է համաձայնուած գներն կէտք կանխիկ վճարել և մնացեալը աւարտմէն անմիջապէս վերջ:

Տպարանը բաց է ամեն օր առաւօտեան ժամը 7 և 12 և կես օրէ վերջ 2 և 7 ր:

ՀՆԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 6 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1901

2404	5006	6069	1411	4829	372
626	650	955	1649	2028	2020
2564	3297	3506	4431	4754	4708
5150	5583	6503	6732	8192	8733
			8756	8835	9386

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՎԱՐՉԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ

ԿԻՐԱԿԻ 6 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1901

6526	2779	8132	5880	290	475
851	1329	1492	1757	2136	3534
3610	3817	4041	4307	5114	5466
5815	5818	6496	7324	8003	8088
8242	8433	8833	8848	9621	9981

ՏՊԱՐՈՒԹԻՒՆ Ե. ԹՈՐՈՍՅԱՆԻ